Տ. ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ըստ ավանդույթի, նորաօծ եպիսկոպոսը Ուխտի Ս. Պատարագ է մատուցում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև:

Հունվարի 21-ին Մայր Տաճարում իր եպիսկոպոսական Ուխտի Անդրանիկ Պատարագը մատուցեց Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը: Նորաօծ Սրբազանի եպիսկոպոսական ձեռնադրությունը տեղի ունեցավ հունվարի 15-ին՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

«...Այսօր մենք իբրև շարունակողը առաքելական քարոզչության, իբրև հետևորդը մեր Տիրոջ մի պահ մտածեցինք, թե արդյոք մենք մեր արժանիքներո՞վ է, որ հասանք այս աստիճանին, թե՞ դարձյալ Աստծո ողորմությունը և Աստծո սերն է, որ մեզ ընտրեց և Իր բանավոր հոտին հովիվ պատրաստեց»,- եպիսկոպոսական անդրանիկ քարոզում ասաց նորաօծ Սրբազանը՝ փառք և գոհություն մատուցելով Աստծուն՝ աստվածային ողորմությամբ եպիսկոպոսության աստիճանի և կոչման արժանանալու համար (տե՛ս էջ 24): Նորաօծ Սրբազանը աղոթեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության և հայոց ազգի խաղաղ ընթացքի ու փրկության համար: Սրբազան Հայրը նաև իր երախտագիտության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր հանդեպ դրսևորած հայրական հոգածության համար:

Սուրբ Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Եգիպտոսի հայոց թեմի Թեմական խորհրդի անդամներ:

Տ. ԱՐՄԱՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում եպիսկոպոսական ուխտի Անդրանիկ Պատարագը մատուցեց հունվարի 15-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եպիսկոպոս ձեռնադրված Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

Սուրբ Պատարագի ընթացքում նորաօծ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզեց ներկա հավատացյալ ժողովրդին (տե՛ս էջ 28):

Արմաշ Սրբազանը նաև աղոթք բարձրացրեց առ Աստված՝ հայցելով, որ Ամենաբարձրյալը միշտ հաստատուն պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: